Հավելված 5.
ՀՀ Լոռու մարզպետարանի
գլխավոր քարտուղարի
2019թ. հոկտեմբերի 25-ի
թիվ 1565 հրամանի

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ /ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ/ ՄԱՍՆԱԳԵՏ**

**1. Ընդհանուր դրույթներ**

**1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**
Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչություն/ մասնագետ (ծածկագիրը՝ 95-3.3-Մ6-1)

**1.2. Ենթակա և հաշվետու է**
Մասնագետը ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

**1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**
Մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետներից մեկը:

**1.4. Աշխատավայրը**
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, ք.Վանաձոր, Հայքի հրապարակ 1

**2. Պաշտոնի բնութագիրը**

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

1. օժանդակում է մարզի հողերի օգտագործման սխեմաները սահմանված կարգով կառավարության հաստատմանը ներկայացնելու աշխատանքներին
2. մասնակցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականության հողերի օտարման և օգտագործման տրամադրման աշխատանքներին.
3. մասնակցում է հողօգտագործման արդյունավետությանն ուղղված նպատակային ծրագրերի, հողերի միավորման, բաժանման և կոնսոլիդացիայի նախագծերի, ինչպես նաև ոլորտի նորմատիվ-իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին.
4. մասնակցում է պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի մասնավորեցման և հետագա օգտագործման ուղղությունների, հողերի պահպանության, միավորման և վերաբախշման նպատակային ծրագրերի մշակման աշխատանքներին
5. մասնակցում է իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, գրությունների և այլ փաստաթղթերի, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի կազմման աշխատանքներին.
6. մասնակցում է հողաշինության և հողօգտագործման բնագավառում մարզպետին վերապահված լիազորությունները ապահովելու՝ բաժնի գործառույթներից բխող այլ աշխատանքներին
7. ըստ անհրաժեշտության ներկայացնում է զեկուցագրեր՝ ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում կատարվող աշխատանքների վիճակի մասին:

**Իրավունքները՝**

1. մասնակցել փոփոխվող հողամասի համար կազմված հողաշինական գործի հիմնավոր փաստաթղթերի ուսումնասիրմանը
2. համայնքներից ստանալ առաջարկություններ ծրագրերի վերաբերյալ և մասնակցել դրանց մշակմանը
3. ստանալ համապատասխան նյութեր և փաստաթղթեր

4 պատրաստել առաջարկություններ և եզրակացություններ իրականացված աշխատանքների արդյունքերի մասին
5 ուսումնասիրել և վերլուծել կատարված աշխատանքները

**Պարտականությունները՝**

1 հողաշինական գործի ամբողջական փաթեթը, հետագայում համայնքի կայացրած ավագանու որոշումը և սեփականության իրավունքի վկայականը ներկայացնել Բաժնի պետին:
2 ստորագրել հանձնաժողովի արձանագրությունը
3 ստանալ տեղեկատվություն
4 ներկայացնել առաջարկություններ հողօգտագործման արդյունավետությանն ուղղված նպատակային ծրագրերի կազմման համար
5 ուսումնասիրել հիմքերը, նախապատրաստել տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ
6 մասնակցել հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության աշխատանքներին:

## 3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

**3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

Միջնակարգ կրթություն

**3.2. Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

**3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը**

Առանց աշխատանքային ստաժի

**3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

**ընդհանրական կոմպետենցիաները՝**

1. Հաշվետվությունների մշակում
2. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
3. Բարեվարքություն

**ընտրանքային կոմպետենցիաները՝**

1. Բանակցությունների վարում
2. Բողոքների բավարարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

## 4.Կազմակերպական շրջանակ

**4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման համար:

**4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

**4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

**4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ շփվում է պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

**4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է մասնագիտական խնդիրների բացահայտմանը և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Invalid signature

X 

ՀՐԱՅՐ ՊԱՊՈՅԱՆ

Հ.ՊԱՊՈՅԱՆ